

ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ համաքաղաքացիներ, ավարտին է մոտենում 2018 թվականը:

Ամփոփելով անցնող տարին՝ վստահաբար կարող ենք ասել, որ այն մեր համայնքի համար եղավ ձեռքբերումների և առաջընթացի տարի: Մենք միասին կարողացանք հաղթահարել մի շարք դժվարություններ: Մենք դարձանք մի մեծ ընտանիք՝ մեկ նպատակով՝ լինել ամրակուռ, դիմակայել ժամանակի մարտահրավերներին: Տարին առանձնացավ կատարված բազում բարեփոխումներով: Թե՛ սպորտային, թե՛ մշակութային և թե՛ սոցիալ-տնտեսական ոլորտներում մի շարք ծրագրեր իրականացվեցին, կատարվեցին ներդրումներ՝ ի նպաստ Վեղի համայնքի առաջընթացի:

Ձեր վստահությունն ու հավատը տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ ուժ է տալիս շարունակելու մեր համայնքի զարգացմանն ուղղված անավարտ ծրագրերն ու նախաձեռնությունները: Սիրելի հայրենակիցներ՛, թևակոխելով 2019 թվականը, վստահաբար մեր առջև խնդիր ենք դնում համընթաց զարգացում ապահովել համայնքի բոլոր մասերում և համայնքի բնակիչների համար՝ մեծից փոքր: Գալիք տարում ևս մեր աշխատանքային գործունեության կենտրոնում շարունակելու է մնալ համայնքի բնակիչը՝ իր հոգսերով ու խնդիրներով, արժանավայել ապրելու իր ձգտումով:

Սիրելի հայրենակիցներ՛, թող ամանորյա սեղանների շուրջ հնչած բոլոր բարեմաղթանքներն ու ցանկությունները ի կատար ածվեն: Հանդուրժողականությունն ու կամեցողությունը թո՛ղ դառնան յուրաքանչյուրիս ուղեկիցն ու կարգախոսը: Թո՛ղ ձեր ընտանիքներում մշտապես հնչեն մանկան երգն ու ծիծաղը: Թո՛ղ մայրական օրհնանքն ու հայրենի հողի սատար ուժը նեցուկ լինեն սահմանին կանգնած զինվորին, տունդարձի ճանապարհն ընտրած տարեգիր հայորդուն, և մեր անդորրն ու խաղաղ կյանքն ապահովող բոլոր բոլորին:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ: